

նոյն գործարանը — Վենին ձմեռանոցին մերձակալքը — 7800 բուման ծախքով գոր դարձեալ նուիրած է Չաքիկինց : Կարողիկոս այդ բարերարին անուր քանդակել տուած է տպարանին ձախարն : Հոնկէ յոյս ընծայուած Ա. զիբքը կը համարուի **Տաղարան** մը (Սիմեոն կարողի) որ իր անարուեստ տիպին համար շատ հաւանական է որ երեսն չէ հանուած : Այդ զիբքը 1777 ին վերտօնն դրոշմուած է **Տաղարան փոփոկ** խորագիրով : Իսկ Գ. տիպը կատարուած է 1793 ին : Անդրանիկ տաղարանէն վերջ, 1774 ին կը տպուին հայրապետին 2 գործերն ալ, **Տօնացոյց** և **Ջրօտարան հոգեւոր** (ձրի բաշխուած), 1777 ին **Կարգ քաղման** «նայրապետաց, եպիսկոպոսաց և քանանայց» : — Սիմեոն 1780 ին վախճանելով չկրնար լամբոկ անկ **Պարսազմար** խորագիրով զիբքին տպագրութիւնը որ մահէն 3 տարի վերջ միայն աւարտած է, իրեն յաջորդ Ղուկաս կարողիկոսի ջանքերով, որ տպարանը շէնցունելու փոյր տարաւ և տեղափոխեց զայն իր վերաշինել տուած «խոնանոց»ը : Հող տպուած են 1785 ին **Ասեկի ժամագիր** մը [փորձերու սրբագրիջ՝ Քաղեոս Վրդ., տառերն ու մէջի զարդերը պատրաստող՝ Վաղարշապատցի «վարպետ» Յարութիւն և իր աշկերտը՝ տիրացու Խաչատուր, գրաշար՝ տիրացու Մաղաքիա և Աղեքսանդր սարկաւազ, գրածոյ և մրագարի՝ Գեորգ Էն.], **Յովնեսպո** (1787), **Շարական** (1789) : * * 1793 բուականէն վերջ, կես դար շարունակուող տպարանական ամբարտնաւոր կը տիրէ Էջմիածին, վերագրելի՝ քաղաքական դեպքերու որոնք կը տպագրուեցունեն Հայաշխարհը, հետեւաբար նաեւ Ս. Արոսը : Յովնանէս Ը. Կարբեցի կարողիկոսի օրով միայն 1842 ին կը տպուի Շահրխարցի Յովն. Եպսկ. Շահխարսունեանցի **Ստորագրութիւն կարողիկէ Էջմիածնի և Իիկոզ գաւառաց Աշխարհաց** խորագիրով շանեկան երկնատոր զիբքը : — Ինք և յաջորդ հայրապետներ (Ներսէս Ե. Աշտարակեցի, Մատթէոս Ա., Գեորգ Գ., Մակար Ա. և Խրիմեան) միում կու տան և քաջալեր կը հանդիսանան կրթական գործին, որով Ռուսաստանը Կովկասի և Ռուսիոյ զանազան քաղաքներուն մէջ նորակազմ գաղութներով Դեռագնետ կ'ունենան իրենց դպրոցները, Միութիւններն ու տպարանները, Քրքրանոյցմէ աւելի խանդով և հմտութեամբ ծաղկեցունելով հայ գրականութեան բոլոր սեռերը : — Դասնալով Էջմիածնայ տպարանին, 1868 ին ընտրուող Գեորգ Գ. տարի մը վերջ զայն վերակազմած է և հիմնած բազմադրդին ձեւարանը : Մակարի օրով կառուցուած է շէնք շնորք տպարան մը՝ պարունակող ձուլարան, գրաշարանոց և արագատիպ մամուլներ, Սանասարեանի, Անանեանցի և այլոց նպաստներով : Հայոց Հայրիկն ալ իր կարգին ջանադիր եղած է տպարանին բարելաւան, Վիեննայէն նորածոյ տառեր բերել տալով : — Հոնկէ յոյս ընծայուած զիբքերը եղած են . — **Առաջնորդ** լուսաշախի ձանապարհին յսխոնեանական կենաց (1864), **Կոնդակ** . . . առ. հոգեւորական (1865), **Վիպասանութիւն** սակա Պանդուռնեացն Ջարմի և Մամիկոնեան սեռի, **Ազգաբանութիւն Հայոց** (1870), **Դաւիթ բէգ** (1871), **Ստորագրութիւն** հոգեւոր մեծի ուխտին Այրի վանոց (1873), **Դասագիրք** եկեղ. ձանագրութեան, **Վաղարշապատ** (1874), **Նախակրթանք** հայ լեզուի (1875-6), **Մառոց** (1876), **Նիկոլ Յպսկ.** (1877), **Ժամագիրք ասեկի** (1878), **Դասասանագիրք** Միխրար Գօշի (1880), **Աւետարան** համարարատ. (1884), **Արտ Հայաստանեայց** (1888), **Աւետարան** իւղարերից (1892), **Հայոց նոր վկաներ** (1902-3), **Սիրոյ և վճար երգիչը** (1908), նաեւ **Օրացոյցներ**, **Կոնդակներ** և 1868 են սկսեալ ցարդ շարունակուող **Արարատ** անուն Մայր Արտի օրկան կրօնարկերը : — Այս տպարան ժամանակին Վօսկուայէն նուր տացած է մամուլ, Վիենն. տառեր և Խաչկալեանի «մայր»երը որոնք սակայն անգործութեան դատապարտուած են հիմա :

299. **Աւանան Արդ. Բառասման** 1870 ին ԳԱՅԱՆԷՆԷ ՎԱՆԻՔԻՆ մէջ տպարան մը կը հիմնէ (Ս. Էջմիածնի տառերով) և կը նրատարակէ **Իպոց** ուսանող. նանդէր :

ԻԷՎԻՄԻԱՅԻՄԻՔԻԱ քաղաքին մէջ (գոր Ռուսաստանը նախապէս ուղղաբարմ են ՍԱՆԿՏ ԲԵԳԵՐԲՈՒԲԷ և ապա ՊԵՏՐԲՈՒԲԷ) առաջին անգամ տպարան բացողը կ'ըլլայ :

300. **Գրիգոր Խաղարեանց** Ջուղայեցի վաճառականը (որ Խօջամաչի որդին էր և որ Հնդկաստանէն Լօնտօն անցնելով 10 տարի մնացած է նոն) : Ինք Անգլիացիի մը պատրաստել տալով հայ տառեր՝ փոխադրած է Բեդրապուրկ և 1781 ին գործի ձեռնարկած, իրեն զօրակից ունենալով Սիմեոն կարողի ձեռնասուտի՝ երկալնարագուկ Յովսէփ Ս. (որուն առանձնակի պիտի անդրադառնանք քիչ վնոյ) : — Խաղարեանց 1780 ին Լօնտօն տպել տուած է Յովսէփ